որոշում, բացառությամբ սույն օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

Վերոգրյալի հիման վրա՝ նկատի ունենալով, որ Հրավերի ընթացակարգը գնահատող հանձնաժողովի 17.04.2024թ. թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումները՝ Հրավերի ընթացակարգը գնահատող հանձնաժողոի կողմից արդեն իսկ անվավեր են ճանաչվել, իսկ Հրավերի ընթացակարգը գնահատող հանձնաժողովի այլ նիստերով կայացված որոշումներ սույն հայցադիմումով չեն վիճարկվում, Դատարանը գտնում է, որ վեճը սպառվել է, ուստի քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կարճման:

Միաժամանակ, Դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական գործում առկա մյուս ապացույցների և փաստարկների գնահատմանը չի անդրադառնում, քանի որ վիճարկվող որոշումներն անվավեր ճանաչված լինելու և այլ որոշումներ վիճարկված չլինելու պայմաններում՝ դրանք որևէ նշանակություն ունենալ չեն կարող գործի լուծման համար:

Միաժամանակ, Դատարանն անդրադառնալով գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցին, գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կարճման և բացակայում է պետական տուրքի գումարը վճարելու պարտականությունը Պատասխանողի վա դնելու հիմը, ինչպես նաև նկատի ունենալով, որ Հայցվորի կողմից նախապես վճարվել է անհրաժեշտ չափով պետական տուրքի գումարը, Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Կարճել թիվ ԵԴ2/3343/02/24 քաղաքացիական գործի վարույթը:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝

Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am